Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին

Մասիս քաղաքային համայնքի բյուջեի վարչական մասում անհրաժեշտություն է առաջացել կատարել հետևյալ փոփոխությունները.

Երկրում ռազմական դրությամբ պայմանավորված՝ պետական բանակին աջակցելու նպատակով՝ Համահայկական հիմնադրամին անհրաժեշտություն է առաջացել կատարել նվիրատվություն 5 000 000 դրամի չափով, որը առաջարկվում է հատկացնել հանգստի և սպորտի ծառայություններ դասակարգման՝ սպորտային նպաստներ հոդվածից՝ 500 000 դրամ և շրջակա միջավայրի պաշտպանություն դասակարգման՝ այլ կոմունալ ծառայություններ հոդվածով՝ թափառող շների վնասազերծման համար նախատեսված միջոցներից՝ 4 500 000 դրամ:

Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգման համար բնակիչներից ստացվել են բազմաթիվ դիմումներ, սակայն նախատեսված միջոցները չեն բավարարում իրականացնելու անհրաժեշտ ծավալի ընթացիկ նորոգում: Առաջարկվում է՝ նվազեցնել բյուջեով նախատեսված ճանապարհների ընթացիկ նորոգման համար նախատեսված և մրցույթի արդյունքում տնտեսված միջոցներից 500 000 դրամ և ուղղել տանիքների ընթացիկ նորոգմանը:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան